ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանի ելույթը «InHead» միջբուհական ուսանողական գիտաժողովում

Հայաստանի Հանրապետության մեծարգո վարչապետ,

Հարգարժան գործընկերներ, հյուրեր, սիրելի ուսանողներ

Երեկվանից մեկնարկել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ուսանողական խորհրդի և Հայաստանի երիտասարդական հիմնադրամի նախաձեռնությամբ կազմակերպված «Հայաստանի Հանրապետության տնտեսական համակարգը. նորարարություն, զարգացում, իրագործում» խորագրով «InHead» միջբուհական ուսանողական գիտաժողովը, որը նվիրված է բուհի 85-ամյակին: Այն իր շուրջն է համախմբել հայաստանյան բուհերի ուսանողներին՝ հնարավորություն ընձեռելով շուրջ 3 օր քննարկելու տնտեսության տարբեր ասպեկտներին վերաբերող հարցեր:

Ֆինանսական շուկայի զարգացման հիմնախնդիրներ, դրամավարկային քաղաքականության, ապահովագրական շուկայի, բանկային համակարգի առանձնահատկություններ, ՀՀ տնտեսական զարգացման հեռանկարներ, նորարարություն, ինովացիա և 4 տասնյակից ավելի թեմաներ, որոնք, հուսով եմ, կդառնան մեր ուսանողների քննարկման առարկան: Կարևոր է նաև, որ ուսանողները հատուկ ուշադրության են արժանացրել Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցը և գիտաժողովում հատուկ բաժին են առանձնացրել՝ դրանով իրենց մասնակցությունը բերելով Ցեղասպանության զոհերի հիշատակի արարողություններին:

Հարգելի ներկաներ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գիտահետազոտական գործունեությունը դրվել է նոր հիմքերի վրա: 2013թվականից համալսարանում գործում է «Ամբերդ» հետազոտական կենտրոնը, որը ստեղծվել է բուհի խորհրդի որոշմամբ: Սա համալսարանական հետազոտական, գիտական գործունեությունը նոր աստիճանի հասցնելու հավակնոտ քայլ էր: Այսօր արդեն կենտրոնը Հայաստանի Կառավարության ղեկավար, հարգարժան պարոն Աբրահամյանի հանձնարարությամբ հետազոտություններ է իրականացնում նախարարությունների համար: Թե կենտրոնի, թե համալսարանում ստեղծված գիտաուսումնական խմբերում, պրոֆեսորադասախոսական անձնակազմից բացի, ներգրավված են մեծ թվով ուսանողներ, ովքեր նաև վարձատրվում են: Հուսով ենք, որ սա լավ խթան է բուհական գիտության զարգացման համար, իսկ ուսանողների համար նաև մեծ հնարավորություն՝ զարգացնելու հետազոտական կարողությունները:

Մենք այն համոզմանն ենք, որ տնտեսագետներ պատրաստող մայր բուհը պետք է կարողանա իր գիտական, հետազոտական աշխատանքներով օգտակար լինել Կառավարությանը, իր համեստ ներդրումն ունենալ երկրի տնտեսության զարգացման գործում: Իսկ այս գիտաժողովը ևս մեկ առիթ է, որ մեր ուսանողները փորձեն որպես հետազոտողներ նորարարական մոտեցումներ առաջարկել, ինչը կարող է հետաքրքրություն ներկայացնել:

Մեր համալսարանում ուսանողների ինքնադրսևորման համար այլ պայմաններ ևս ստեղծված են: Գովելի է, որ ակտիվ և նախաձեռնող գործունեություն է ծավալում նաև մեր համալսարանի ուսանողական խորհուրդը՝ կազմակերպելով բազմաթիվ միջոցառումներ՝ հաջողություններ արձանագրելով նաև հանրապետական նշանակության տարբեր նախագծերում: Սա մեզ հպարտանալու բազմաթիվ առիթներ է տալիս:

Այս նախաձեռնությանը նույնպես մաղթում եմ հաջող ընթացք:

Շնորհակալություն ուշադրության համար:

Հարգանքով՝

ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ